

## Սիրելի հայրենակիցներ,

Այս տարուայ երկրորդ եռամսեային, Երեսփոխանական Գրասենեակի աշխատանքները հասան իրենց գագաթնակետին, թե՛ կազմակերպական առումով, թե՛ նախապէս ծրագրուած հարցերու դրական արդիւնքներու ձեռքբերումով եւ թե՛ այլ երկիրներէ Կիպրոս ժամանած պատուիրակութիւններու եւ անհատներու անակնկալ այցելութիւններով: Այս բոլորին կողքին, գաղութէն ներս ունէինք տարեկան հերթականութեամբ գործադրուող ազգային, միութենական ձեռնարկներ եւ միջոցառումներ, որոնք թերեւս ուղղակիօրէն չէին առնչուեր մեր գործունեութեան հետ, սակայն անպայման որոշ հանգրուանի մը, կարիքը կը զգացուեր մեր օժանդակութեան: Անշուշտ, չէինք կրնար ձեռնածալ մնալ, երբ մեր նպատակն ու նշանաբանը միշտ եղած է ու պիտի մնայ *կարելիութեան սահմաններէն ներս սատար հանդիսանալ բոլորին անխտիր, ծառայելով գաղութի ընդհանրական շահերուն:*

Վերոնշեալ տողերուն ապացոյցը դուք պիտի տեսնէք «Լրատու»ի յաջորդող էջերով եւ այս թիւին հետ ներփակուած թերթիկներուն ընդմէջէն: Այս բոլորին կողքին կան նաեւ զանազան տեսակի աշխատանքներ եւ մեր կողմէ տրամադրուած բարոյական եւ մարդասիրական օգնութիւններ, որոնց մասին անհնար է գրաւոր արտայայտուիլ եւ կամ լուսաբանել գաղութը:

Չարեանցի կերպով հոս կը փափաքիմ նշել գաղութին համար ապահովուած կարգ մը յատկանշական ի-

րագործումներ, որոնք արդիւնքն են մի քանի տարուայ վրայ երկարող տեսակցութիւններուն եւ հետեւողական աշխատանքին: Առաջինը, կը վերաբերի յունատառ թերթերու մէջ լոյս տեսած յօդուածներուն, որ ուրախութեամբ կ'ընդգծեմ, թէ մեծ հետաքրքրութիւն ստեղծած է կիպրացի ժողովուրդին մօտ, որոնք յետ այսու պիտի դադրին մեզի հարց տալէ, թէ ինչպէ՞ս Կիպրոս եկած ենք եւ ե՞րբ, ի՞նչ լեզու կը խօսինք եւ կամ ի՞նչ կրօնքի կը պատկանինք: Երկրորդը, Կիպրոսի Պետական Համալսարանի Օտար Լեզուներու Բաժանմունքին, յաջորդ կրթական տարեշրջանէն սկսեալ Հայերէն Լեզուի դասընթացքներուն պարագան է, որ աստիճանաբար կրնայ վերածուիլ Հայկական ամպիոնի մը ստեղծման: Յիշեցնեմ, թէ այս դասընթացքներուն մասնակցութեան դիմումնագիրները կը գտնուին մեր գրասենեակը եւ արձանագրութեան **ժամկետն է 13 Սեպտեմբեր 2010**: Հետեւաբար, կոչ կ'ուղղեմ բոլորին, որ իրենց կարգին քաջալերեն այն անհատները, որոնք շատ քիչ հայերէն գիտեն կամ բոլորովին անտեղեակ են հայերէն լեզուէն: Սփիւռքի մէջ մեր գոյատեւման առաջին ու վերջին գրաւականը մեր լեզուն է ու կրօնը: Երրորդ կենսական քայլը, որ առնուեցաւ Նարեկ Վարժարաններու Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ եւ իմ թելադրանքով, 2010-2011 դպրոցական տարեշրջանէն սկսեալ, յետմիջօրէի սերտողութեան եւ այլ զբաղումներու դրութիւնն է: Այս միակ միջոցն է աշխատող ծնողներուն ուսերէն ամենաձանր բեռը թեթեւցնելու, որոնք երեկոյեան յոգնած տուն կը վերադառնան եւ ժամանակ չունին իրենց զաւակներուն դպրոցական դասերով զբաղելու եւ կամ երկար ժամեր աշխատելուն պատճառով, դպրոցական ժամերէն դուրս այլ վայրեր կը փըն-

տոնն իրենց զաւակներուն հոգատարութիւնը յանձնելու: Ուրեմն՝ կը յանձնարարեմ որ Նարեկի ծնողները, որոնք այս նախաձեռնութեան կարիքը կը զգան, ընդառաջեն այս ծրագիրին արձանագրելով իրենց զաւակները:

Գալով Երեսփոխանական Գրասենեակի մօտալուս մեծածաւալ մշակութային ձեռնարկին, որ պիտի իրագործուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Նոյեմբեր 2010ին, հրաւիրած ենք երաժիշտ-յօրինող Արա Գեորգեանը, ընկերակցութեամբ մօտ հայրենի 20 երաժիշտներու, համագործակցութեամբ Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբին եւ մասնակցութեամբ «Սիփան» պարախումբին, ելոյթ ունենալու Ստրովոլոսի քաղաքապետարանի շքեղ սրահին մէջ: Շատ պիտի խնդրէի մեր ժողովուրդէն, որ իրենց ներկայութեամբ նախ պատուեն ու խրախուսեն մեր հայրենի արուեստագետները, ինչպէս նաեւ գիտակցին տարուող լայնածաւալ աշխատանքին, որ կը միտի վառ պահել Հայաստան-Կիպրոս մշակութային փոխյարաբերութիւնները:

Խօսքս պիտի վերջացնեմ ձեր բոլորին մաղթելով բարի ու հանդարտ արձակուրդ:

**Վարդգէս Մահտեսեան**  
**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքի (Aliens & Immigration Unit) կառույցներու փոխադրութեան աշխատանքները՝ ըստ մեզի հասած տեղեկութիւններուն, տակաւին կը շարունակուին եւ կը սպասուի, որ մինչեւ Սեպտեմբերի վերջը բոլոր թղթածրարները փոխադրուած ըլլան նոր արխիւատուն եւ Յունուար ամիսէն սկսած աշխատանքը հասնի իր լրումին:

Վերոնշեալ պատճառով, զգալի ուշացում արձանագրուած է կեցութեան արտօնագիրները (Residence Permits) ուղարկելուն մէջ եւ կը յանձնարարենք, որ չստացուելու պարագային, օտարահպատակները տարին չբլորած դարձեալ դիմում կատարեն Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին մօտ, նոր դիմումին կցելով նախորդ դիմումին ստացականը:

### Հպատակութիւն

Յունիս ամսուան մէջ, Նիկոսիաբնակ անհատ մը, որ փոքր տարիքէն իր ծնողքին հետ Կիպրոս հաստատուած էր, ստացաւ Կիպրական հպատակութիւն:

### ՀՀ Եւրոտեսիլ 2010ի Ներկայացուցիչ Էվա Ռիվաս Կիպրոսի մէջ

Հինգշաբթի, 8 Ապրիլ 2010ին, Պրն. Վարդգէս Մահտեսեանի հրաւերով ու հապճեպ կարգադրութեամբ, եռօրեայ այցելութեամբ Յունաստանէն Կիպրոս ժամանեց ՀՀ Եւրոտեսիլի Ներկայացուցիչ Էվա Ռիվասը, ընկերակցութեամբ երգահան-յօրինող Արմէն Մարտիրոսեանի եւ շրջապատոյտի ղեկավար Հրաչեայ Մեսրոպեանի: Եւրոտեսիլի Ներկայացուցչութիւնը Կիպրոս կեցութեան ժամանակաշրջանին, հիւրընկալուեցաւ Տէր եւ Տիկին Մահտեսեանի:

եաններու կողմէ:

Ուրբաթ, 9 Ապրիլի առաւօտուն, Էվա Ռիվաս Ելոյթ ունեցաւ RIK1 հեռատեսիլի կայանի ΕΡΤά Δέκα յայտագիրէն, իսկ գիշերուայ ուշ ժամերուն երգելով Zoo հաւաքատեղին մէջ, ան հմայեց հայ եւ օտար հասարակութիւնը:



Շաբաթ, 10 Ապրիլի առաւօտեան ժամը 11.00ին, Էվա Ռիվաս ու իր պատուիրակութիւնը Նիկոսիոյ քաղաքապետ Էլէնի Մաւրույի եւ Տեր եւ Տիկին Մահտեսեաններու ներկայութեամբ, Հասարակաց Պարտեզին մէջ շրջապըտոյտի աւանդական «Ծիրանի Ծառ»ը տնկեցին: Ծառատնկումէն ետք, տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, որուն մեծապէս անդրադարձան Կիպրոսի մամուլն ու հեռատեսիլի կայանները: Այս միջոցառումէն ետք, ՀՀ Եւրոտեսիլի պատուիրակութիւնը այցելեց Վարուժան Արքեպիսկոպոսին: Նոյն օրուայ երեկոյեան, Էվա Ռիվաս երեք երգերով հանդես եկաւ Համագգայինի «Սիփան» պարախումբի 10ամեակի Ելոյթին, անմոռանալի տպաւորութիւն ձգելով

600-է աւելի հանդիսատեսներու միտքերուն մէջ: Այս ձեռնարկը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Դոկտ. Աստրեաս Տիմիթրիուի եւ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի:

### **Ապրիլեան Եղեռնի 95-րդ ամեակի ոգեկոչում**

Չորեքշաբթի, 21 Ապրիլ 2010ին, Պետական Ներկայացուցիչը Նախագահեց Լառնաքայի Նարեկ Վարժարանի կազմակերպած Ապրիլեան Ոգեկոչման ձեռնարկը, հանդիսութեան ներկայ գտնուելով: Իսկ Շաբաթ ելոյթ ունենալով RIK2 հեռատեսիլի կայանի «Չայերը Կիպրոսի մէջ» յայտագրէն, ան իր պատգամը փոխանցեց Կիպրացիներուն:

Յինգշաբթի, 22 Ապրիլ 2010ին, Պետական Ներկայացուցիչը Խորհրդարանի նիստին խօսք արձնելով, անգամ մը եւս յիշեցուց, թէ Չայկական Յեղասպանութեան գծով



Թուրքիոյ անպատիժ մնալը, վնաս է համայն մարդկութեան եւ եթէ Թուրքիա քաջութիւնը չունենայ ընդունելու իր արարքը, պիտի չկարենայ մաքուր ապագայ մը կերտել իր ժողովուրդին համար:

Շաբաթ, 24 Ապրիլ 2010ին, «Փասիտի» սրահին մէջ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 95-ամեակի ոգեկոչման հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Հայկական Տեղասպանութեան Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբին եւ մասնակցութեամբ աւելի քան 350 ներկաներու ու մեծաթիւ պետական պաշտօնական մակարդակի հրաւիրեալներու: Ուղերձի իր խօսքով հանդէս եկաւ Պրն. Վարդգէս Մահտեսեան, որ ընդգծեց Հայ եւ Յոյն Կիպրացիներու միացեալ պայքարը՝ ի նպաստ իրենց խնդրի իրաւունքներու տիրացման: Օրուայ բանախօսն էր Եւրոխորհրդարանի անդամ Պրն. Եուաննիս Բասուլիտիս, որ շեշտը դրաւ Հայկական Տեղասպանութեան միջազգային գետնի վրայ ճանաչման կարեւորութեան, մեջբերելով Հրանդ Տիկնի հետեւեալ խօսքը «չկարողացայ երկիրներու խորհրդարաններ համոզել, սակայն գրիչովս կարողացայ Թուրքիոյ մտաւորական դասը զգաստութեան բերել»:



**ՀՀ Գործարարներու Միութեան այց (RUEA)**

Ապրիլ 25-30 Կիպրոս այցելեց ՀՀ Գործարարներու Միութեան (RUEA) պատուիրակութիւն մը, բաղկացած վեց անհատներէ, որոնք հրաւիրուած էին Կիպրոսի Գործարարներու եւ ճարտարարուեստի Միութեան (OEB)

կողմէ, զարգացնելու Կիպրոս-Հայաստան փոխյարաբերութիւնը եւ գործակցութիւնը այս ոլորտէն ներս: Անոնց ժամանած օրը, Պետական Ներկայացուցիչը եւ Տիկինը զանոնք հիւրասիրեցին իրենց բնակարանին մէջ, ներկայութեամբ ՕԵԲի տնօրէնութեան:

### **ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանին պաշտօնական այց**

Եռօրեայ այցելութեամբ Չորեքշաբթի, 5 Մայիսին Կիպրոս ժամանեց ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանը: Յաջորդ օրը առաւօտուն, ան շրջապտոյտ մը կատարեց Պրն. Մահտեսեանի ընկերակցութեամբ, այցելելով Նիկոսիոյ Նարեկ Վարժարանն ու Մելգոնեան Կրթական Հաստատութեան կառոյցները: Իսկ յետմիջօրէին, դարձեալ Պետական Ներկայացուցիչին ընկերակցութեամբ, ան հանդիպում մը ունեցաւ Կաթողիկոսական փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, ինչպէս նաեւ Վարչական ու Թեմական մարմիններու անդամներուն հետ:

Հինգշաբթի, 6 Մայիսին, Պրն. Դեսպանը իր հաւատարմագիրը յանձնեց Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիար Տիմիթրիս Խրիստոֆիասին: Նոյն օրը, նորանշանակ Դեսպանը Պետական պաշտօնական մակարդակի տեսակցութիւններ ունեցաւ եւ ընկերակցութեամբ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի. անոնք հանդիպեցան Կիպրոսի Խորհրդարանի հայազգի Նախագահ Մարիոս Կարոյեանի հետ:

Նախօրօք որոշուած ժամադրութիւններով, Պրն. Ղալաչեան Հինգշաբթի 6 եւ Ուրբաթ 7 Մայիսի երեկոյեան ժամերուն, «Հիլթըն» պանդոկին մէջ, անհատական տեսակցութիւններ ունեցաւ Կիպրահայ գաղութի կուսակցութիւններու եւ ակումբներու ներկայացուցիչներուն հետ:





Իսկ Ուրբաթ երեկոյեան, ի պատիւ Պրն. Դեսպանին, Պետական Ներկայացուցիչը իր բնակարանին մէջ հիւրասիրեց Պրն. Ղալաչեանն ու իր ազնիւ տիկինը, ներկայութեամբ Կիպրահայ գաղութի պատկան մարմիններու եւ կառոյցներու ներկայացուցիչներուն:

Վերջապէս Շաբաթ օր Կիպրոսէն չմեկնած, Պրն. Դեսպանը, Պետական Ներկայացուցիչին ընկերակցութեամբ, այցելեց Գալայճեան Հանգստեան Տուն, յետոյ Լառնաքայի Յեղասպանութեան յուշակոթող, Լառնաքայի Ս. Ստեփանոս Եկեղեցի եւ Նարեկ Վարժարան:

**Հայ ժողովուրդի եւ Կիպրահայութեան պատմութեան մասին յօդուածագրութիւն յունատառ թերթերուն մէջ**

Նախաձեռնութեամբ Պրն. Մահտեսեանի, 2010 Մայիս ամիսէն սկսեալ Կիպրոսի գրեթէ բոլոր յունատառ թերթերուն մէջ հրատարակուեցան եւ ամսական դրութեամբ պիտի շարունակուին լոյս տեսնել՝ Հայ ժողովուրդի եւ մասնաւորաբար Կիպրահայ գաղութի պատմական հոլովոյթին, մշակութային ժառանգութեան, լեզուին ու կրօն-

քին մասին յօդուածներ: Պետական Ներկայացուցիչին տարած երկարաշունչ աշխատանքին շնորհիւ, բոլոր թերթերը անվճար եւ սիրայօժար կերպով ընդունեցին տպել սոյն յօդուածները, անոնց բովանդակութիւնը նկատելով օգտաշատ եւ կենսական: Այս յօդուածներու շարքը, լոյս պիտի սփռէ Կիպրոսի մէջ երկար տարիներէ ի վեր ապրող եւ Կիպրոսի ժողովուրդին հետ սերտ կապեր ունեցող փոքրամասնութեան մը ծագումին ու պատմութեան մասին անհրաժեշտ տեղեկութիւններ: Յօդուածները բժախնդրօրէն պատրաստելու ծանր աշխատանքը յանձն առած է Երեսփոխանական Գրասենեակի Օտար Մամլոյ Ներկայացուցիչ Ալեքսանդր Յաճիլիրասը:

### Մակարավանք ուխտագնացութիւն



Կիրակի, 9 Մայիս 2010ին երրորդ անգամ ըլլալով, միացեալ կազմակերպութեամբ Պետական Ներկայացուցիչի Գրասենեակին եւ Ազգային Առաջնորդարանին, հեզասահ կերպով տեղի ունեցաւ դէպի Մակարավանք ուխ-

տագնացությունը Կիպրոսի Միացեալ Ազգերու Ուժերու Կազմակերպութեան վերահսկողութեամբ: Մօտ 200 հոգի մասնակցեցան ուխտագնացութեան, որոնց շարքին՝ Լիբանանէն, Անգլիայէն եւ Եւրոպայի տարբեր երկիրներէ հիւրեր:

Վանքին քարուքանդ մատուռին խորանին շուրջ բոլորած, ուխտագնացները անգամ մը եւս վերանորոգելով իրենց ուխտը, Վարուժան Արքեպիսկոպոսի, Նիկոսիոյ Քահանայ Յօր եւ սարկաւազներու առաջնորդութեամբ, խունկ ու մոմ վառելով ու սրտանց աղօթելով երգեցին «Յայր Մեր»ն ու «Կիլիկիա»: Իսկ այս տարի, «Տեր, Ողորմեա»ի խորհրդաւոր երգեցողութիւնը միասնաբար կատարեցին Սոփրանօ Սոնա Կարկալոյեան եւ Տեր Մոմիկ Քինյ. Յապէշեան:

Նոյն օրը երեկոյեան, Երեսփոխանական Գրասենեակին կողմէ անանդութիւն դարձած մամլոյ հաղորդագրութիւն մը յղուեցաւ բոլոր տեղական թերթերուն եւ հեռատեսիլի կայաններուն, որուն մէջ լայնօրէն արձանագրուած էր վանքին աշխարհագրական դիրքը եւ մշակութային արժէքները ներկայացնող պատմականը: Մամուլը եւ յատկապէս հեռատեսիլի կայանները, լայն ձեւով արձագանգեցին ուխտագնացութեան, այս մասին հաղորդում կատարելով երեկոյեան մայր լուրերու բաժինէն:

Իսկ Կիրակի, 23 Մայիս 2010ին, ՄակարաՎանքին մասին RIKի «Կիպրիոն Նոստոս» յայտագիրէն, ելոյթ ունեցաւ Երեսփոխանական Գրասենեակի Օտար Մամլոյ Ներկայացուցիչ Ալէքսանդր Յաճիլիրասը:

### **Սեռային դաստիարակութիւն եւ առողջ յարաբերութիւններ**

### **Sex Education and Healthy Relationships**

Երեսփոխանական Գրասենեակի կազմակերպութեամբ, Ուրբաթ 14 Մայիս 2010ի երեկոյեան, «Իւթիւն-



եան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Սեռային դաստիարակութիւն եւ առողջ յարաբերութիւններ» թեմայով դասախօսութիւն-գրոյց մը: Այս ձեռնարկին ներկայ էին առաւելաբար ծնողներ եւ զգալի էր երիտասարդներու նուազ թիւով մասնակցութիւնը, հակառակ այն իրողութեան որ նիւթը խիստ այժմեական էր: «Ընտանեկան Ծրագրում Կազմակերպութեան» նախկին գործադիր տնօրէն Տիկին Տեքսթո Յատճիլիզու, համակարգիչի օգտագործումով, ճարտար ձեւով ներկայացուց օրուան նիւթը: Դասախօսութենէն ետք, ներկաները լուսաբանական հարցումներ ընելով օրուան դասախօսին, գոհացած հեռացան սրահէն: Պրն. Մահտեսեան շնորհակալութիւն յայտնելով Տիկին Յատճիլիզուին, անոր յանձնեց յուշանուէր մը:

### **«Յայաստանի Եւրոպացի Ընկերներ» կազմակերպութեան այց (EuFoA)**

Մայիս 28-30 Կիպրոս այցելեց «Յայաստանի Եւրոպացի Ընկերներու» կազմակերպութեան (EuFoA) պատուի-



րակութիւն մը, գումարելու Հայաստան-Եւրոպա Խորհրդրդատու Մարմինի անդրանիկ ժողովը: Վերոյիշեալ կազմակերպութեան Ընդհանուր Քարտուղար Դոկտ. Մայքըլ Զեմպեք, յատուկ գիրով մը հրաւիրեց Պրն. Մահտեսեանը մաս առնելու երկօրեայ ժողովին, որ կը միտի քաղաքական, գործարարական եւ մշակութային կամուրջներ ստեղծել, Եւրոպայի եւ Հայաստանի միջեւ փոխյարաբերութիւններն ու համագործակցութիւնը զարգացնելու: Յիշենք, թէ այս կազմակերպութեան հիմնադիր անդամներէն է Եւրոխորհրդարանի անդամ երեսփոխան Եուանսնիս Զասուլիտիս:

Պատուիրակութեան իսկ փափաքով, Կիպրոս ժամանած օրը, երեկոյեան, անոնք ներկայ գտնուեցան «Փասիտի» սրահին մէջ կայացած Մայիս 28ի տօնակատարութեան եւ անկէ ետք, Հ.Ե.Մ.ի սրահին մէջ տեղի ունեցած ճաշկերոյթին: Իսկ Մայիս 30ին, Պրն. Մահտեսեանի գլխաւորութեամբ, անոնք Նիկոսիոյ Քաղաքապետ Տիկ. Էլէնի Մաւրոյի հետ հանդիպեցան Լիտրա փողոցի կանաչ

գիծին մօտ, ուր տուին մամլոյ ասուլիս: Կեսօրին, բոլոր ժողովի մասնակիցները հիւրասիրուեցան ՏԵՐ ԵՆ Տիկին Մահտեսեաններու բնակարանը, ներկայութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Կիպրոսի Եւրոխորհրդարանի անդամ Երեսփոխաններուն:

### **Չինուորական ծառայութիւն**

Երեքշաբթի, 22 Յունիս 2010ին, երկրորդ տարին ըլլալով, Պրն. Վարդգէս Մահտեսեանի նախաձեռնութեամբ եւ հրաւերով, Երեսփոխանական Գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը, ներկայութեամբ 2010 Յունիսին զինուորական ծառայութեան թեկնածու տղոց ու անոնց ծնողներուն:

Այս հանդիպումին ներկայ էր նախանցեալ տարեշրջանին բանակ գացած առաջին հայ զինուոր Արէն Արմենակեանը, որ լայն գիծերու մէջ բացատրութիւններ տուաւ բանակի ծառայութեան կազմակերպական աշխատանքներուն մասին: Հանդիպման ընթացքին, ներկաներուն տրուեցաւ սկիզբի ժամանակաշրջանին անհրաժեշտ իրերու եւ պիտոյքներու ցանկը, ինչպէս նաեւ այլ տեղեկութիւններ պարունակող թերթիկ մը:

### **Աւանդական շրջանաւարտներու հիւրասիրութիւն**

Չորեքշաբթի, 23 Յունիս 2010ին, տեղի ունեցաւ շրջանաւարտներու աւանդական հիւրասիրութիւն, Պետական Ներկայացուցիչին բնակարանին մէջ, ներկայութեամբ մօտաւորապէս 60 Հայ շրջանաւարտներու: Հիւրասիրութեան ներկայ էին Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեան, Բահանայ Հայրերն ու Նարեկ Վարժարաններու ուսուցչական կազմի անդամները: Հաճելի ժամեր անցընելով, շրջանաւարտները առիթը ունեցան մօտէն զրուցելու Պրն. Մահտեսեանին հետ:

**Երեսփոխանական Գրասենեակի Արուեստի Դպրոց**



Չորեքշաբթի, 30 Յունիս 2010ին, «Իւթիւճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ Երեսփոխանական Գրասենեակի 6-12 տարեկան փոքրիկներու Արուեստի Դպրոցի պարի ամալերջի ելոյթը, ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչին ու իր ազնիւ տիկնոջ, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց ոչ միայն ծնողներուն մօտ, այլեւ Պրն. Մահտեսեան ականատես ըլլալով տարուած աշխատանքին, շնորհակալութիւն յայտնեց պարուսոյց Տիկին Արմենուհի Միսիթարեանին եւ ծնողներուն, իսկ փոքրերուն անուանեց «Կիպրոսի Արեւիկ»ը:

**Պետական-պաշտօնական մակարդակի  
հանդիպումներ**

Երեքշաբթի, 11 Մայիս 2010ին, Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Երեսփոխանական Գրասենեակին մէջ, Թիւֆէնկճեան Հիմնարկի Գործադիր Տնօրէն Պրն. Անդրանիկ Գասապեանի հետ, վերջինիս խնդրան-

քով, որ Կիպրոս կը գտնուէր Հիմնարկի աշխատանքներուն կապակցութեամբ:

Հինգշաբթի, 24 Յունիս 2010ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան Ընդհանուր Դատախազ Պրն. Պետրոս Զլիրիտիսին հետ, քննարկելու Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն կարգավիճակին բարելաման կարելիութիւնները:

### **Ձեռնարկներու Ներկայութիւն**

Կիրակի, 11 Ապրիլ 2010ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Հին Գերեզմանատան Ս. Պօղոս մատուռին մէջ, 47 տարիներ ետք, առաջին անգամ տեղի ունեցող Մեռելոցի առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ հոգեհանգստեան արարողութեան:

Երկուշաբթի, 12 Ապրիլ 2010ին, Պետական Ներկայա-





ցուցիչն ու իր տիկինը, իրենց բնակարանին մեջ հիւրասիրեցին Տեր եւ Տիկին Վերապատուելի Դոկտ. Վարդգես Զասունին, ներկայութեամբ Տեր եւ Տիկին Զրայր Ճեպեճեանի: Վերապատուելի Զասունի Կիպրոս կը գտնուէր որպէս հիւր դասախօս Զայ Աւետարանական Եկեղեցւոյ կազմակերպած Ս. Չատկուայ պաշտամունքին:

Շաբաթ, 17 Ապրիլ 2010ին, Պետական Ներկայացուցիչն եւ Տիկինը ներկայ գտնուեցան Զամազգայինի «Սիփան» պարախումբի Լիմասոլի ելոյթին, որ տեղի ունեցաւ ETHAL սրահին մէջ, Նախագահութեամբ Լիմասոլի Բաղաքապետ Աստրեաս Էրիսթուի եւ Զովանաւորութեամբ Պրն. Վարդգես Մահտեսեանի:

Չորեքշաբթի, 12 Մայիս 2010ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Նարեկ Վարժարաններու տարեկան մարզահանդէսին: Առաջին երեք տեղերը գրաւող աշակերտներուն Պետական Ներկայացուցիչը յանձնեց համապատասխան մետալներ:

Ուրբաթ, 4 Յունիս 2010ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած ԶՕՄի 100ամեակի ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ STOA ճաշարանի ընդունելութեան սրահին մէջ, Նախագահութեամբ Տիկին Մակի Մահտեսեանի:

Շաբաթ, 5 Յունիս 2010ի առաւօտեան, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան հրաւեր ստանալով, Նախագահական Պալատին մէջ ներկայ գտնուեցան Պենետիկոսս Ժ2. Պապին պատմական այցելութեան առթիւ տրուած ընդունելութեան: Իսկ Նոյն օրուայ երեկոյեան, Պետական Ներկայացուցիչը իր բնակարանին մէջ հիւրասիրեց Ներսէս-Պետրոս Ժ2. Կաթողիկէ Զայոց Պատրիարքը, որ Կիպրոս կը գտնուէր դիմաւորելու Պենետիկոսս Ժ2. Պապը:

Չորեքշաբթի, 16 Յունիս 2010ին, Պետական Ներկայացուցիչն եւ Տիկինը ներկայ գտնուեցան Նարեկ Վարժարաններու Ամավերջի հանդէսին, որ կը վայելէր Պրն.

Վարդգես Մահտեսեանի Նախագահութիւնը: Վկայականներու բաշխումէն ետք, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Նարեկի շրջափակէն ներս, ուր շրջանաւարտները ուրախ պահեր անցուցին իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ Պետական Ներկայացուցիչին հետ:



Չորեքշաբթի, 23 Յունիս 2010ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ եղան Համագայիկի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած՝ Քարմէն Լապաքիի «Անունս Արամ Է» վաւերագրական ժապաւէնի ցուցադրութեան, Սիկոսիոյ K-Cineplex շարժապատկերի հանդիսասրահէն ներս: Ձեռնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Հինգշաբթի, 24 Յունիս 2010ին, Պրն. Վարդգես Մահտեսեան Նախագահութիւնը տալով, ներկայ գտնուեցաւ Պրն. Եղիա Գայայեանի խմբագրած «Մելգոնեան Կրթական Հաստատութեան Յուշամատեն» հատորի շնորհա-

հանդես-գինեձօսին, Առաջնորդարանի «Իլթիճեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Վարուժան Արքեպիսկոպոսին:

### **Շնորհաւորական գիր**

Պետական Ներկայացուցիչը 14 Մայիս 2010 թուակիր նամակով, երկար ու առողջ կեանք մաղթեց Տիկին Թագուհի ՏԵՎԼԵԹԵԱՆԻՆ, իր երկարամեայ անսակարկ նուիրումին ու վաստակին համար, որ ի սպաս դրաւ Կիպրոսի Արեւուշական Շարժումին վերելքին, արժանանալով կազմակերպութեան ամենաբարձր շքանշանին:

Պրն. Մահտեսեան 18 Մայիս 2010 թուակիր գիրով, շնորհաւորեց Զ.Բ.Ը.Մ.ի «Արարատ» Ֆութսալի խումբը, որ զոյգ յաջողութիւններ արձանագրելով 2009-2010 տարեշրջանին համար տիրացաւ Կիպրոսի Ֆութսալի ախոյեանութեան եւ բաժակին: Ան նաեւ իր անկեղծ շնորհաւորութիւնները ուղղեց մարզիկներուն եւ մարզիչ Արա Պետրոսեանին:

Իսկ 18 Մայիս 2010 թուակիր նամակով, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Զ.Մ.Մ.ի Ֆութսալի խումբը, որ երրորդ դասակարգէն անցաւ երկրորդ դասակարգ:

### **Ցաւակցագիր**

Երկուշաբթի, 12 Ապրիլ 2010ին, Պետական Ներկայացուցիչը անձամբ ներկայանալով Լեհաստանի Դեսպանատուն, 10 Ապրիլ 2010ին տեղի ունեցած օդային արկածի տխուր պատահարին առնչութեամբ, սգոյ մատենին մէջ ցաւակցական արձանագրութիւն մը ստորագրեց իր ու Կիպրահայ գաղութին անունով:

Ուրբաթ, 30 Ապրիլ 2010ին, Պրն. Մահտեսեան ցաւակցագիր մը յղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Նշան Ս. Եպիսկոպոս Թուփուզեանի վախճանման տխուր առիթով:

«Ծանօթանանք Կիպրոսի  
Հանրապետության Օրենքներուն»  
բաժինը լոյս պիտի տեսնէ «Լրատու»ի  
յաջորդ թիւով, չծանրաբեռնելու համար  
մեր ընթերցողները:

Ամառուայ արձակուրդին առիթով  
Երեսփոխանական Գրասենեակը,  
Երկուշաբթի, 2 Օգոստոս 2010-էն  
մինչեւ Կիրակի, 22 Օգոստոս 2010-ը  
փակ պիտի մնայ:

## ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com  
Ուտայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy